ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛ.
МУНИЦИПАЛИТЕТ с. АЙГЕШАТ

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ, գ. Այգեշատ հեռ.
(0237) 6 – 90 – 34, (0237) 71 – 7 - 51

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирская обл. С.Айгешат
Тел. (0237) 6 – 90 – 34, (0237) 71 – 7 - 51

«13» 02 2013թ. N 11

Արմավիրի մարզպետ

պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 7 – ին կայացած թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր՝ 10 թերթ:

Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

1530-13
13 02 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեշատ (Արմ.) համայնք, փողոց 3 N 9 շենք

# ՈՐՈՇՈՒՄ

«7» փետրվարի 2013 թվականի N1
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4 – րդ մասով.

Ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվար 7-ի թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0)

Ա. Դիդարյան
Գ. Ղազարյան
Ջ. Ոսկանյան
Ռ. Հասոյան
Վ. Հունանյան

**Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան**
**2013թվական փետրվարի 7**
**գ. Այգեշատ (Արմ.)**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեշատի գյուղական
համայնքի ավագանու
2013թվականի փետրվարի «7» ի
թիվ 1 որոշմամբ

# ՕՐԱԿԱՐԳ

1. Թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ Ա.Մխիթարյան

2. Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N31-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

   Զեկուցող՝ Ա.Մխիթարյան

3. Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

4. Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի(Արմ.) գյուղական համայնքի սեփականության 2012 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

   Զեկուցող՝ Ա.Մխիթարյան

5. Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի 2012 թվականի ավագանու հերթական նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեշատ (Արմ.) համայնք, փողոց 3 N 9 շենք

## ՈՐՈՇՈՒՄ
«07» փետրվարի 2013 թվականի N 2 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.)ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 – Ի N 31–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի առաջին մասի 3 – րդ կետով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 – րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և երրորդ մասով.

Ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի 2012 թվականի դեկտեմբերի 20 – ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 31 – Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները:

1) Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը ընդամենը 5339.5 (հինգ միլիոն երեք հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) դրամ, որից 2340.0 (երկու միլիոն երեք հարյուր քառասուն հազար) դրամ վարչական բյուջե, 2999.5 (երկու միլիոն ինը հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր ) դրամ ֆոնդային բյուջե:
2) Բյուջեի եկամտային մասում՝ հատված 1 – ում «Պետական բյուջեից ֆինանսա - կան համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ» տողը պակասեցնել 2.1 (երկու հազար մեկ հարյուր ) դրամով:
3) Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ուղղել հետևյալ ծախսերի ֆինանսավորմանը.
ա) որպես նախորդ տարիների պարտք, 01 բաժին 1 խումբ 1 դաս 4212 հոդվածը ավելացնել 100,0 (մեկ հարյուր հազար ) դրամով :
բ) որպես նախորդ տարիների պարտք, 01 բաժին 1 խումբ 1 դաս 4216 հոդվածը ավելացնել 300,0 (երեք հարյուր հազար ) դրամով:
գ) որպես նախորդ տարիների պարտք, 01 բաժին 1 խումբ 1 դաս 4252 հոդվածը ավելացնել 200,0 (երկու հարյուր հազար ) դրամով:
դ) որպես նախորդ տարիների պարտք, 01 բաժին 1 խումբ 1 դաս 4261 հոդվածը ավելացնել 200,0 (երկու հարյուր հազար ) դրամով:

ե) որպես նախորդ տարիների պարտք, 01 բաժին 1 խումբ 1 դաս 4264 հոդվածը ավելացնել 800,0 (ութ հարյուր հազար ) դրամով:
զ) որպես նախորդ տարիների պարտք, 05 բաժին 1 խումբ 1 դաս 4213 հոդվածը ավելացնել 390,0 (երեք հարյուր իննսուն հազար ) դրամով:
է) որպես նախորդ տարիների պարտք, 06 բաժին 3 խումբ 1 դաս 4212 հոդվածը ավելացնել 350,0 (երեք հարյուր հիսուն հազար ) դրամով:
4) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ուղղել հետևյալ ծախսի ֆինանսավորմանը.
ա) 01 բաժին 1 խումբ 1 դաս 5113 հոդվածը ավելացնել 2999.5,0 (երկու միլիոն ինը հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր ) դրամով:
5) Բյուջեի ծախսային մասում՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս 4214 հոդվածը պակասեցնել 2.1 (երկու հազար մեկ հարյուր ) դրամով:
6) Բյուջեի ծախսային մասում՝ 11 բաժին 1 խումբ 2 դաս 4891 հոդվածը պակասեցնել 300.0 (երեք հարյուր հազար ) դրամով:
7) Բյուջեի ծախսային մասում՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս 4216 հոդվածը ավելացնել 300.0 (երեք հարյուր հազար ) դրամով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10 – րդ օրը :

Կողմ(5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Դիդարյան
Գ. Ղազարյան
Զ. Ոսկանյան
Ռ. Հասոյան
Վ. Հունանյան

Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան
2013 թվական փետրվարի 7
գ. Այգեշատ (Արմ.)